

ՅԵՂԻՇԵ ԶՈՐԵՆՑ

Ռ Ո Ւ Բ Ա Յ Ա Թ

MCMXXVII

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Գրանեզմար № 1139

Տիրած 1000

Թվֆլիս, ժ.Տ.Հ.Խ. Պոլիգր.-Տրեստի 4-րդ սույ. Պուշկ. փող. № 3

Ա.

Ապրում ես, շնչում ես, դու զեռ կաս—

բայց ամեն վայրկյան դու սյլ ես.

Անցյալ ե գառնում քո ներկան—

ու ամեն վայրկյան դու սյլ ես.

Բայց ներկան քո—հունա ե գալիքի՝

մեննելով—նա սնում ե գալիքը,

Յեվ այսպես—տևում ես դու յերկար,—

ու ամեն վայրկյան դու սյլ ես:

Բ.

Քո ամեն ակնթարթը մի սերմ է,
Վոր կրում է իր մեջ իր մահը.
Բայց հողին քո—խնդուն ու անահ է
Յեւ միշտ խնդավառ է ու ջերմ է:

Գ.

Նա թե կյանք է, թե մահ—ահնթարթը.
Անհատնում հատնում է, վառք է.—
Յեվ այսպես՝ մշտատե է աշխարհը.
Անգաղար թարթում է—ու անթարթ է:

Դ.

Նա հոսում է, ալիք առ ալիք,
Յեվ ամեն վայրկյան—այն չէ.
Յեվ ամեն մի վայրկյանը—հնչեղ
Ներկա յե, անցյալ—ու գալիք:

ՅԵ.

Յես քեզ վո՞նց, քեզ վո՞նց հասկանամ,
Յես քեզ վո՞նց ամփոփեմ ուղեգրում իմ,
Յերբ չեկած՝ դու արդեն իսկ չկաս,
Բայց հոր դու լինում ես—ու սեռում ես:

Զ.

Անցնում ե, հասում ե, վարար ե,
Յեղնում ե, սուզվում անդադար.
Մշտապես մեռնում ե—ու հար ե.
Մշտապես ու հար—անկատար:

Ե.

Ո, խմիր, խմիր դու սղան,
Ո, խմիր անդադար այս հասնումը.
Կորածը—իրեն նա գտնում է,
Յեվ իր այգ գտնումով—չկա:

Ը.

Այս զեար—նայիր—նա հասում ե,
Քեզ թվում ե թեկուզ անփոփոխ:
Իսկ քո փառքը, հիմար, յերազում ե—
Հավերժական կոթող:

Թ.

Եյ, դու, իմաստուն վարպետ,
Վոր տաշում ես, տաշում այդ քարերը.
Քո ամեն մի, ամեն մի զարկին
Իր նիշը արդեն նա դրել է:

ժ.

Նա կրկին ասում է.— «Գարունը
Ծաղկելու յե եզուց վարդերով իր»:
Սակայն Վճր արևն է հուրհուրում այդ
Յեւ ձվ է այդ նոր արանվորը...

ԺԱ.

Վերցնում ես քարը— մտածում ես,
«Հեռքեր ե կրում նա ջրի»—
Բայց չե՞ վոր այդ նույն վայրկյանին հենց
Իր վրա դու քո ձեռքը դրիր:

ժԲ.

Մի անցորդ անցավ քաղաքից այս
Ու գնաց. ու շեկավ նա յետ:
Յեվ քաղաքը — կրկին գեղեցիկ է,
Նայում եմ նրան — թեև յես:

ԺԳ.

Դու ամեն վայրկյան քեզ ժխտում ես
Ու այդպես ժխտելով՝ հաստատում.
Պարտքվում ես դու քեզ ու հաղթում ես,
Սա՛ւյն միշտ՝ այդ դու յես — ու դու:

ԺԴ.

Անտառը թափում է իր սաղարթը,
Անտառում հասնում է ու վասնում.
Բայց հայեր—ինչքան նա գվարթ է,
Ինչքան նոր է—ու միշտ անհասնում:

ԺՅԵ.

Դու վռակի գրիչ ունես,
դու այնպես խմաստուն ես.
Ինքդ քեզ հրածեշտ ես ասում,
ինքդ քեզ կրկին ընդունում ես.
Գիտես, վոր՝ լինելով ե լինում,
հասնելով ե անհասնում այս տունը—
Յե՛վ միշտ ծիծաղիւն ե հոգիդ
ու սիրտդ՝ մշտապես խնդուն ե:

ԺԸ.

Յերկնքից թռչում է մի թռչուն. —
քո ներկան է այն, բարեկամս.

Ինքն իրեն ժխտող մի հնչյուն —
քո ներկան է այն, բաշեկամս.

Նա գնաց — ու կրկին դարձավ. —
այդ նս՞ յե արդյոք, թե ուրի՞շք.

Դու նրան ել չես ճանաչում...
քո ներկան է այն, բարեկամս:

ԺԹ.

Գու մի որ աչքերդ կփակես,

վոր ուրիշը քո տեղ գոյանա.

Կզնաս, կանցնես աշխարհից,

վոր ուրիշը քո տեղ գոյանա.

— Այն դու յես, իմաստուն, այն դու, —

բայց արդեն զարձամ մի ուրիշ.

Հաստատեց, ժխտելով, նա քեզ,

վոր ուրիշը քո տեղ գոյանա:

Ի.

Իհնչ թմուկ ե քս զինին, իմաստուն.

նրանից իմ հոգին հարբում ե.

Նա զինի՞ յե, թե խոսք ե ազգու.

նրանից իմ հոգին հարբում ե.

Խմելու յես, մահով իմ սերած,

խմելու յես դու յե՛լ այս զինին,

Յեթե այս պարտեզը զաս դու. —

նրանից իմ հոգին հարբում ե:

ԻԲ.

Դու քսում ես հոնքերիդ սուրմա—
դու անհոգ ես.
Ինչո՞ւ յե տրանջում դուր նա—
դու անհոգ ես.
Յես գիտեմ թե տրտունջը նրա,
[Թե քո այդ պայծառ խնդուլթյունը,
Տուր դու ինձ մանկություն, տուր մահ,—
դու անհոգ ես:

ԻԳ.

Դու ինքդ քո մեջ միտսիրտ. —

Ինչ վոր կաս՝ նա կա ու աչդպէս է.

Դու արվում ես մեզ միշտ միտսին. —

Ինչ վոր կաս՝ նա կա ու աչդպէս է.

Բացվում ես, լինում, գոյանում —

Տառնելով հենց ինքդ քո դեմ՝

Պատմում ես դու միշտ քո մասին. —

Ինչ վոր կաս՝ նա կա ու աչդպէս է.

ԻԴ.

Ախ, նաչեք, այդ մարդը, այդ հիմարը. —

նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.

Հավատում է նա, վոր սա քար է.

նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.

Դու ծաղրիք նրան, իմաստուն.

դու տեսնում ես աճումն ու ընթացքը

Յեւզ գիտես, վոր ընթացք է աշխարհը, —

նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է:

ԻՅԵ.

Այդ կապիկը՝ ձեռքին հայելի—

նա կարծում է՝ արդեն իմաստուն է.

Փայտում է հայելուն հայելիս—

նա կարծում է՝ արդեն իմաստուն է.

Ախ, հայեք՝ ինչպե՞ս է սեղմել

նա փայլուն ապակու այդ կտորը.

Իր միբաժն է տեսել նա ելի—

և կարծում է՝ արդեն իմաստուն է:

Ի.Զ.

Այդ զերվիշը — տեսեք՝ նա նստած
 ուզում է ըմբռնի ու հասնի.
Իր մաքի թեզերին վստահ՝
 ուզում է ըմբռնի ու հասնի.
Նա կարծում է, վոր փոխվում է ամբողջը,
 և իր միտքն է միայն, վոր կայուն է—
Յեվ այդպես՝ անշարժ ու հաստատ՝
 նա ուզում է ըմբռնի ու հասնի...

ԻԵ.

Գու ասիր՝ նայել, հասկանալ,
ու սուզվել, ու դառնալ անե.—
Նա ասաց՝ լինել, կատարել,
ներծծել հուրեր ու շողեր:
Գու ասիր՝ ամփոփել ամբողջը,
հաշարվել ու խաղաղ լինել.—
Նա ասաց՝ ամբողջին տիրանալ,
վորպեսզի ամբողջը — փոխել:

ԻԸ.

Դու ասիր՝ անե՛ յե ամբողջը,
աչքերիդ իջած մի շղարշ ե.
Դու զերի՛ յես, մարդ, ուղեղիդ,
ուղեղիդ անե վանդակին: —
Նա անդու՛ւ պնդում համարեց
թե ուղեղը այդ, թե շղարշը —
Յե՛վ յելավ, վոր փոխի այդ շղարշը —
և մահին խնդաց խնդացին:

ԻԹ.

Նա կուզեր, վոր լինի անե,
Վոր թվա լոկ, լոկ լինի հարց.
Բայց կսնզնած ե նա, ահա տես -
Մշտածուփ, մշտափոխ ու կարծր:

L.

Թե արեւը այրում ու կրկում է—

Նա ասում է՝ ուր է իմ կամքը.

Ամեն ինչ անհաստատ ու հոսուն է.

Նա ասում է՝ ուր է իմ կամքը.

Ո, գիտես դու աշխարհի լեզուն

և գիտես, վեր կամքդ՝ այդ լեզուն է—

Իսկ հիմարը գեռ ամսոտում է.

Նա ասում է՝ ուր է իմ կամքը:

ԼԱ.

Ասում են՝ վրիթխարի հերոս,
հանճարեղ ե յեղել Իսրայանդարը.
Շարժել ե, խառնել ե իրար
ազգեր ու ցեղեր Իսրայանդարը.
Բայց գիտես դու շարժումն ու ընթացքը
և գիտես՝ չլիներ թե ընթացքը-
Աշխարհում և մի շուղ անգամ
զժվար թե շեղեր Իսրայանդարը:

ԼԲ.

Հետեանք ես դու, իմաստուն, —

այս մեկը դու լավ իմացիր.

Բայց դ՞ու ել ես, դ՞ու ել ես ազգում, —

այս մեկը դու լավ իմացիր.

Իսկ ուզում ես, վոր ազնա լինես. —

ուրեմն հասկացիր ճանապարհդ

Յեւ զփոխիր, վոր հաստատ գաս սուն, —

այս մեկը դու լավ իմացիր:

ԼԳ.

Մի հարուստ ե անցնում փողոցով—

ախ, նայեք՝ նա ինչքան ինքնազոհ ե.

Մի ժպիտ կա գնմքին խոցող—

ախ, նայեք՝ նա ինչքան ինքնազոհ ե.

Նա կարո՞ղ ե հասկանալ, այդ հիմարը,

փոր շուրջը ուռճանում ե իր մահը

Յե՛վ աննեղ այդ ձեռքը սղոցող—

ախ, նայեք՝ նա ինչքան ինքնազոհ ե:

ԼԴ.

Մտել են տոնական դռներից—

և դրախտ են կարծել այս տունը.

Սահմանված ձեռքով մի վերին՝

անխախտ են կարծել այս տունը:—

Յետևի դռներից մենք մտանք՝

քանդելով սյուներիս ու հիմերը—

Յեվ գիտենք՝ ձեռքերով ձեր շինված

մի դնդանն է անձև այս տունը:

ԼՅԵ.

Քեզ տրված է կյանքը, վոր լինես—
ու վոչինչ յերազ չթվա,
վոր կյանքում քո կյանքը չինես—
ու վոչինչ յերազ չթվա.
Քեզ գերում է ընթացքը այս տաք,
բայց տեսնում ես դու այն, վոր գալիս է,
Գալիս է իր գալիքը հինե—
ու վոչինչ յերազ չթվա:

ԼԶ.

Աշխատիր, տոկն անդադար, ստեղծիր անդուլ—
դա կամուրջ է.
Դրանով ես շինում դու աշխարհը, դրանով քանդում—
դա կամուրջ է.
Դրանով սերմանում ես կյանքեր,
մեռնելով՝ հառնում դրանում.
Հուրհուրա խանդով, իմաստուն, ու խնդան խնդուն—
դա կամուրջ է:

ԼԵ.

Ընթացիր դու, մարդ, անդադար,
վոր վոչինչ քեզ յերայ չթվա,
վոր լինես անվախճան ու հար—
ու վոչինչ քեզ յերայ չթվա,
վոր զգաս, շոշափես դու կյանքը՝
մշտանոսը դու այդպիսով
Յեվ դառնա աշխարհը՝ աշխարհ—
ու վոչինչ քեզ յերայ չթվա:

ԼԸ.

Ծովափին նստած ե մի մարդ.—
այդ դ՞նէ յես զուցե, իմաստուն.
Նայում ե ծովին նա հանդարտ—
այդ դ՞նէ յես զուցե, իմաստուն.
Նա զվարթ ժպտում ե ծովին,
Նա սիրում ե հոսուն այդ անձունը—
Բայց ա՛նա հեռանում ե անդարձ,—
այդ դ՞նէ յես զուցե, իմաստուն:

ԼԹ

Նա ուզում է գտնել մի կշիռ—
 ու չափել նրանով ամբողջը,
 Ունենալ անխախտ մի հաշիվ—
 ու չափել նրանով ամբողջը.
 Նա սիրում է «ճավերժը» միայն.
 ախ, նայե՛ք՝ նա փնտրում է «կայունը»—
 Յեվ գտնում է մի... գինու շիշ—
 ու չափում նրանով ամբողջը:

Խ.

Նա կուգեր, վոր վողջը նրան
միանգամ ընդմիշտ արվի,
Վոր կյանքի իմաստը հուրհուրան
միանգամ ընդմիշտ արվի.
Դու գիտես, վոր ընթացք ե աշխարհը,
գոյանում ե ու լինում անվերջ—
Յե՛վ գուցե քեզ մահը միայն
միանգամ ընդմիշտ արվի: